ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2019թ. N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ
ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով, Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի հ.41-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Ս.Օհանովի փողոցի հ.20 շենքի հ.16՝ 44.6 քմ մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 08.10.2018թ. հ.08102018-01-0283 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Արփինե Սամվելի Սիրադեղյանին։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է քաղաքացի Արփինե Սիրադեղյանի կողմից զբաղեցված Ս.Օհանովի փողոցի հ.20 շենքի հ.16՝ 44.6քմ ընդհանուր մակերեսով բնակարանի նկատմամբ ձևակերպել վերջինիս սեփականության իրավունքը:

Ս. Օհանովի փողոցի հ.20 շենքի հ.16 բնակարանը, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 08.10.2018թ. հ.08102018-01-0283 վկայականի տվյալների, հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Համաձայն Հայկական ՍՍՀ աշխատավորների դեպուտատների Երևանի Շահումյանի շրջսովետի գործադիր կոմիտեի 31.05.1977թ. հ.8754 օրդերի՝ Ս.Օհանովի փողոցի հ.20 շենքի հ.16 հասցեում գտնվող բնակարանը (նախկին Մալաթիա-Սեբաստիա Հ/Ա թաղամաս 113 շենք հ.16 բնակարան) հատկացվել է Սամվել Գարեգինի Գրիգորյանին, ով հանդիսացել է Արփինե Սիրադեղյանի մոր՝ Սուսաննա Սիրադեղյանի ամուսինը:

Սուսաննա Սիրադեղյանը և Սամվել Գրիգորյանը ամուսնացել են 1989 թվականին (հիմք ամուսնության ակտի գրանցման մասին 01.03.2018թ. տեղեկանք) և ամուսնալուծվել 1996 թվականին (հիմք՝ 03.02.1996թ. հ.000869 ամուսնալուծության վկայական):

Արփինե Սիրադեղյանն իր մոր Սուսաննա Սիրադեղյանի հետ 1990 թվականից փաստացի բնակվել են Ս.Օհանովի փողոցի հ.20 շենքի հ.16 հասցեում գտնվող բնակարանում /հիմք՝ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի «Տարոն» համատիրության նախագահի կողմից հաստատված հարևանների հայտարարությունը/, իսկ Սուսաննա Սիրադեղյանի մահից հետո (14.01.2013թ. հ.117797 մահվան վկայական) շարունակում է բնակվել նշված հասցեում գտնվող բնակարանում: Համաձայն ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության պետի կողմից տրված 08.10.2018թ. հ.22-81403 տեղեկանքի՝ Արփինե Սիրադեղյանն սկսած 06.07.2006թ-ից հաշվառված է Ս.Օհանովի փողոցի հ.20 շենքի հ.16 հասցեում: Քննարկվող բնակարանը փաստացի օգտագործվում է վերոհիշյալ անձի կողմից, սակայն վերջինս իրավահաստատող փաստաթղթերի բացակայության պատճառով հնարավորություն չի ունեցել այն սեփականաշնորհել:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի ստորաբաժանման կողմից տրամադրած տվյալների համաձայն՝ Արփինե Սիրադեղյանի անվամբ Հայաստանի Հանրապետությունում որևէ անշարժ գույք նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, ինչպես նաև վերջին հինգ տարվա ընթացքում վերջինիս կողմից կնքված անշարժ գույքի օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում Հայաստանի Հանրապետությունում կատարված չէ:

Բնակչության պետական ռեգիստրում հաշվառման մասին 18.01.2019թ. հ.850095 տեղեկանքի համաձայն՝ բնակչության պետական ռեգիստրի պահոցում Սամվել Գրիգորյանի վերաբերյալ տվյալներ առկա չեն:

Սամվել Գարեգինի Գրիգորյանը 1990-ական թվականներից սկսած մինչ օրս Ս.Օհանովի փողոցի հ.20 շենքի հ.16 հասցեում (նախկին Մալաթիա-Սեբաստիա Հ/Ա թաղամաս 113 շենք հ.16 բնակարան) գտնվող բնակարանում չի բնակվել, և որևէ միջոցներ չի ձեռնարկել այն պահպանելու համար, իսկ նրա գտնվելու վայրի վերաբերյալ 1990-ական թվականներից որևէ տեղեկություն հայտնի չէ:

Համաձայն Արփինե Սիրադեղյանի կողմից օրենքով սահմանված կարգով վավերացված 15.11.2018թ. հ.2734 հայտարարության՝ Սամվել Գարեգինի Գրիգորյանի ի հայտ գալու և վերջինիս կողմից Ս.Օհանովի փողոցի հ.20 շենքի հ.16 բնակարանի նկատմամբ օրինական պահանջ ներկայացնելու դեպքում, պարտավորվում է նրան ապահովել բնակարանի նկատմամբ ունեցած իր բաժնեմասով կամ իր բաժնեմասին համարժեք դրամական փոխհատուցմամբ:

Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի հ.41-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ՝ Ծրագրի 4-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի հ.41-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները, ուստի՝ անհրաժեշտություն է առաջացել ընդունելու Երևանի ավագանու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ